

ԷՐՊԻԼԻ (ԻՐԱՔԵԱՆ ՔԻՒՐՏԻՍԱՆ) ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Posted on April 18, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազրոյց՝ Հայ Մշակութային Եւ Ընկերային Միութեան Փոխ-Ատենապետ Յակոբ Սիմոնեանին Հետ

Համօ Մոսկօֆեան, Երպիլ -Իրաքի Քիւրտիստան, 18 Ապրիլ 2013

ՀԱՐՑՈՒՄ.-Պրն. Սիմոնեան, կրնա՞ք դուք ձեզ ծանօթացնել եւ քանի մը խօսք քսել ձեր պաշտօնին մասին՝ Երպիլի Հայ Մշակութային Եւ Ընկերային Միութեան մէջ, ինչպէս նաեւ անդամներու գործունեութեան մասին:



ՊԱՏԱՍԽԱՆ.- Յակոբ Սիմոնեան, ելեկտրագետ-երկրաչափ եմ, միութեան փոխ-ատենապետը: Երկար տարիներ ծառայած եմ հայապահպանման: Քաղաքական դժուարին պայմաններուն պատճառով, հաստատուած ենք Երպիլի մէջ, դարձեալ զբաղելով ազգային գործունեութեամբ: Հայ մշակութային եւ ընկերային Միութեան հիմնադրութենէն ետք, կազմակերպուեցաւ յանձնախումբ-վարչութիւն մը, որ գործը յառաջ տարաւ մինչեւ ընտրութիւնները:

Հարցազրոյց՝ Հայ Մշակութային Եւ Ընկերային Միութեան Փոխ-Ատենապետ Յակոբ Սիմոնեանին Հետ

Համօ Մոսկօֆեան, Երպիլ -Իրաքի Քիւրտիստան, 18 Ապրիլ 2013

ՀԱՐՑՈՒՄ.-Պրն. Սիմոնեան, կրնա՞ք դուք ձեզ ծանօթացնել եւ քանի մը խօսք քսել ձեր պաշտօնին մասին՝ Երպիլի Հայ Մշակութային Եւ Ընկերային Միութեան մէջ, ինչպէս նաեւ անդամներու գործունեութեան մասին:



ՊԱՏԱՍԽԱՆ.- Յակոբ Սիմոնեան, ելեկտրագետ-երկրաչափ եմ, միութեան փոխ-ատենապետը: Երկար տարիներ ծառայած եմ հայապահպանման: Քաղաքական դժուարին պայմաններուն պատճառով, հաստատուած ենք Երպիլի մէջ, դարձեալ զբաղելով ազգային գործունեութեամբ: Հայ մշակութային եւ ընկերային Միութեան հիմնադրութենէն ետք, կազմակերպուեցաւ յանձնախումբ-վարչութիւն մը, որ գործը յառաջ տարաւ մինչեւ ընտրութիւնները:

Երպիլի հայ գաղութը նոր ըլլալով, կազմուած է վերջին 7-8 տարիներուն (2005-2007 թուականներուն գլխաւորաբար) այստեղ հաստատուած հայ ընտանիքներէ, որոնք տուներ առնելով գործի անցան: Այժմ, 160-180 ընտանիքներ հոս տեղափոխուած են: Շատ են նաեւ սուրիահայերը, որոնք նոյնպէս այստեղ հաստատուած են գործի բերումով: Ապա, Հայ Տուն մըն ալ բացուեցաւ, որ անցեալ տարի պաշտօնապէս արձանագրուեցաւ վերոյիշեալ միութեան անունով: Ինչպէս ամենուրեք, այստեղ ալ հայ գաղութի անդամներուն ի մի գալու ցանկալի վայրը դարձաւ: Միութիւնը ունի Երպիլի քրիստոնեայ աւանին՝ Անքավայրի մէջ, իր կեդրոնը, ընտրեալ վարչութեամբ, բազմաթիւ յանձնախումբերով: Հոս հայ լեզուի ուսուցումը մեր հայ մատղաշ սերունդին կը

փոխանցենք ամառնային հայերէն դասընթացքներով՝ տարբեր տարիքներու համար:

Քիւրտիստանի կառավարութիւնը մեզի առիթ ընծայեց հայերէնի դասաւանդութիւնը
հասանելի դարձնելու մինչեւ 14 տարեկան պատանիներուն համար: Կը կազմակերպենք նաեւ երգչախումբ եւ պարախումբ՝ մեր հայրենակարօտ նոր սերունդին համար: Փորձեր կը տարուին մասնակցելու ազգային տարբեր ծեռնարկներու, տօներու եւ ոգեկոչումներու՝ ինչպէս Ապրիլ 24-ի Հայոց Ցեղասպանութեան նուիրուած: Ունինք նաեւ ընկերային ծեռնարկներ եւ դասախօսութիւններ կազմակերպող տիկնանց յանձնախումբ մը: Ընկերային, գիտական յանձնախումբեր: Առայժմ, մնայուն կեդրոն չունինք, վարձու շէնքի մէջ կը գտնուինք, սակայն դիմած ենք կառավարութեան, որ օգնէ հայ տունը գնելու եւ մեր գաղութին տրամադրելու: Մենք թէեւ մնայուն եկեղեցի չենք ունեցած, սակայն Սրբազան հօր ջանքերով, կառավարութիւնը ընդարձակ հող տրամադրած է, որուն վրայ պիտի կառուցուի հայկական եկեղեցի: Այդ տարածքը, շուրջ 4500 քառ. մէթր է: Եկեղեցին շուրջ 400 հաւատացեալներ կրնայ ընդունիլ: Կը կարծեմ թէ պիտի ունենանք եզակի պաշտամունքի, ազգային կրօնական կառոյց մը:

ՀԱՐՑՈՒՄ.-Այս առիթով ի՞նչ խօսք ունիք փոխանցելիք, Սփիւռքի թէ Մայր Հայրենիքի ընթերցողներուն:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Իրաքի Քիւրտիստանը եւ Էրպիլը շատ ապահով բնակավայրեր են, գործի եւ աշխատանքի կեդրոններ: Մենք կը քաջալերենք Սփիւռքի մեր հայրենակիցները՝
այցելելու եւ աշխատանքի անցնելու այստեղ: Վերջին տարիներուն, մեծ ծաղկում կ'ապրի Քիւրտիստանը, որ համաշխարհային գործառուծեան, շինարարութեան եւ առեւտուրի կեդրոններէն մէկը դառնալու ճանապարհի վրայ է:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք այս հիւրընկալ երկրին ղեկավարութեան՝ գլխաւորութեամբ նախագահ Մասուտ Պարազանիին՝ որ ամէն կարելիութիւն ընծայեց մեզի՝ մեր լեզուն եւ կրօնը պահպանելու, ապրելու եւ աշխատելու ազատ եւ ժողովրդավար՝ հարազատ Իրաքի Քիւրտիստանի մէջ:

